

ոչ խորհուրդ տալ: Իսկ քու երկրիդ կորուստը, աները, գերութիւնը իմ ամենեւին հոգս չէ:

— Կ'իմանամ թէ այդ խօսքերուն մէջ կան այնպիսի ծանր բառեր, որոնց հիմա պատասխանել յարկ չեմ համարիր: Բայց որովհետեւ ես պաշտօն ունիմ կայսրեն այս երկիրը կառավարելու եւ սորա փրկութեան հսկելու, եւ կը տեսնեմ վտանգը, որ թէ երկրին կը սպառնայ եւ թէ այս բանակին, կը խնդրեմ իմ խորհուրդներս եթէ արհամարհելի թուին, գոնէ այնպիսի թշնամի մը չարհամարհես, որ քիչ ժամանակի մէջ եւ մէ աչաց առջեւ ոչ միայն Ասորիք, Եգիպտոս յափշտակեց ի կայսրէ, այլ դեռ երէկ՝ մէկ ահագին հարուածով՝ պարսից ինքնակալութիւնը հիմն ի վեր տապալեց:

— Չիս կայսրը հոս չուղարկեց քեզմէ ուսնելու համար ոչ թշնամուոյն արարքը եւ ոչ իմ պարտաւորութիւնքս, պետք է գիտնաս թէ շատ համբերեցի մինչեւ հիմա այդ քու շաղակրատութեանցդ, ուստի լռե՛մ եւ դուրս ել առջեւես:

— Կայսեր հրամանները եւ իր սպարապետները գիտեմ յարգել,— ըսաւ Թեոդորոս ոտք ելնելով եւ սանձելով սրտմտութիւնը,— բայց գիտեմ եւ տեսեր եմ նաեւ այնպիսիներ, որ տան մէջ գիտեն հրամայել իրենց չափեն վեր եւ որոտալ, եւ պատերազմի ասպարեզին մէջ՝ թշնամուոյն առաջ վատանալ եւ փախ չիլ: Կը փափագիմ, Յունաց զօրավար, որ այս վերջի բախտին չի փափագիս:

Եւ երբ այս խօսքերն ըսելով դուրս կ'ելնէր վրանեն, Պրոկոպիոս կատաղութեամբ ետեւեն կը նետեր սպարապետական գաւազանը, հայիոյանք եւ նախատինք ժայթքելով հայ իշխանին, որ՝ առանք գլուխը նաեւ դարձնելու, հայկական խումբին, որ իրեն կը սպասէր՝ «Երթանք, տղա՛ք, Իսմայելի որդուոց դէմ»,— ըսաւ, եւ ամենքը հեծնելով շտապաւ հասան Վարդանակերտ: Բոլոր ճամփան երկայնութեան մէջ ոչ ոք համարձակեցաւ եւ ոչ Սուրեն խօսք մը խօսիլ Թեոդորոսի հետ:

Թեպէտ գիշերը վրայ հասած՝ բայց անխոնջ զօրավարը քաշեց իւր փոքրիկ բանակը Սարեակ ըսուած բլուրներուն վրայ եւ հոն՝ այն կիրճերուն բերանը դարանամուտ կը սպասէր թշնամուոյն, աշնան գիշերներ ցուրտ էին այդ սարերուն բարձրութեան վրայ, բայց ո՞վ կը համարձակէր գանգտիլ, երբ ինք Թեոդորոս առանց կրակի գիշերը կ'անցներ, որպէսզի իւր ներկայութիւնն իմաց չի տայ թշնամուոյն: Զոն երեք օր, երեք գիշեր կեցած կը սպասէր ոչ միայն թշնամուոյն գալուն, այլ նաեւ կը սպասէր Յունաց Սպարապետին փրկարար մէկ շարժման, որ եթէ յառաջանար եւ դիրքը փոխէր թերեւս թշնամին կարենար